ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

« ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 հոկտեմբեր 2018թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Վարդանյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Եղիազարյան, Հ. Թադևոսյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝ Գ. Ներսիսյան, Վ. Թորոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան

«ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կարիքների համար 2018թ. ընթացքում գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի 08.10.2018թ. Ժամը՝ 14:00-ի նիստում հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով էլեկտրոնային փոստի միջոցով որոշեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 8) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած Մասնակից «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց հետևյալը՝

2.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ ճանաչված մասնակից «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվությունը, ինչպես «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ԳՀԱՊՁԲ-18/15» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 3-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է անգործության ժամկետ 5 օրացույցային օր տևողությամբ, հաշված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Եթե նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից բողոքարկման խորհրդում չի բողոքարկում, ապա ընտրված մասնակից՝ «ՌԱՋ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կկնքվի գրասենյակային կահույքի ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ---------- Ա. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Հ. Թադևոսյան

2. ---------- Ա. Եղիազարյան

Բացող անդամներ՝

1. ---------- Գ. Ներսիսյան

2. ---------- Վ. Թորոսյան